ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 210- Ա

08 հուլիսի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 80-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ, 68-րդ հոդվածի 7-րդ և 67-րդ հոդվածի առաջին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41- Ա որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 1999 թվականի սեպտեմբերի 2-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները հաստատելու մասին» N 80-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 101500(մեկ հարյուր մեկ հազար հինգ հարյուր) դրամ, որը կազմում է 203 (երկու հարյուր երեք) հատ 500 (հինգ հարյուր) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկած բոլոր 203 (երկու հարյուր երեք) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:»:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարել բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արսեն Ղուկասյանին՝ սեղմ ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ